ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Երևան-0010, Հանրապետության հր. Կառավարական տուն 3

«03» մարտի 2026թ. N 790-Ա

ՀՐԱՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՎ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՈՒՂԵՎՈՐԱՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 30-Ի ԹԻՎ 9 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի N 1994-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 9-րդ կետի 6-րդ ենթակետի և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 659-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 19-րդ կետի 20-րդ ենթակետի պահանջներով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով կանոնավոր ուղևորափոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցութային հանձնաժողովի 2026 թվականի մարտի 30-ի թիվ 9 արձանագրությունը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանի կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության համապատասխան ոլորտը համակարգող նախարարի տեղակալին:

4/3/2026

ԴԱՎԻԹ ԽՈՒԴԱԹՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐ՝ Signed by: KHUDATYAN DAVIT 1308910274 Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ

ք. Երևան

Հավելված
ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարի
« » _____ 2026թ.
N _____ հրամանի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 9

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցութային հանձնաժողովի

30 մարտի 2026թ. ք. Երևան

2026 թվականի մարտի 30-ին, ժամը՝ 12:00-ին կայացավ Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպությունների ընտրության ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության մրցութային հանձնաժողովի հատուկ նիստ:

Մասնակցում էին հանձնաժողովի
նախագահ՝ Ա. Սիմոնյանը
քարտուղար՝ Պ. Գալստյանը
անդամներ՝ Ա. Խաչատրյանը
Տ. Գասպարյանը
Դ. Մելքոնյանը

«Վարդենիսի տրանսպորտ» ՓԲԸ-ից՝ Ա. Ասատրյանը, Ե. Զարոյանը «Մարտունու համայնքային տրանսպորտ» ՓԲԸ-ից՝ Վ. Միերյանը, Ա. Եղոյանը, Գ. Խաչատրյանը:

<u>Օրակարգում՝</u>

Գեղարքունիքի մարզի Մարտունի և Վարդենիս տարածաշրջանների միասնական երթուղիների համար ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպությունների ընտրության 2026 թվականի ապրիլի 3-ին կայանալիք մրցույթի մասնակցության համար ներկայացված փաթեթների բացումը:

<u>Քննարկվեց՝</u>

Գեղարքունիքի մարզի Մարտունի և Վարդենիս տարածաշրջանների միասնական երթուղիների համար ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպությունների ընտրության 2026 թվականի ապրիլի 3-ին կայանալիք մրցույթին մասնակցելու նպատակով ներկայացված հայտերի համապատասխանության հարցը ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի թիվ 1994-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներին:

Արձանագրվեց՝

1. Գեղարքունիքի մարզի Մարտունի տարածաշրջանի միասնական երթուղիների համար ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպությունների ընտրության 2026 թվականի ապրիլի 3-ին կայանալիք մրցույթին մասնակցելու նպատակով ներկայացվել է մեկ հայտ՝ «Մարտունու համայնքային տրանսպորտ» ՓԲ ընկերությունը, Վարդենիս տարածաշրջանի համար՝ «Վարդենիսի տրանսպորտ» ՓԲ ընկերությունը:

2.«Մարտունու համայնքային տրանսպորտ» ՓԲ ընկերության կողմից ներկայացված փաթեթում առկա են հետևյալ թերությունները,

2.1. հայտ N 2-ը լրացված չէ,

2.2. չի ապահովվել ՀՀ կառավարության 03.12.2020թ. N 1994-Ն որոշմամբ հաստատված մրցութային կարգի (այսուհետ՝ մրցութային կարգ) 14-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջը՝ համաձայն որի երթուղին սպասարկելու համար նախատեսված ավտոբուսների ընդհանուր քանակի առնվազն 10 տոկոսը պետք է լինեն հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի կամ հարմարեցված ԳՕՍՏ 30478-96 ստանդարտի պահանջներին համապատասխան,

2.3. բացակայում են հավաքակայանի սեփականության կամ օգտագործման իրավունքը հավաստող փաստաթղթերը:

3. «Վարդենիսի տրանսպորտ» ՓԲ ընկերության կողմից ներկայացված փաթեթում առկա են հետևյալ թերությունները.

3.1. բացակայում են հավաքակայանի սեփականության կամ օգտագործման իրավունքը հավաստող փաստաթղթերը:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի թիվ 1994-Ն որոշմամբ հաստատված կարգի 34-րդ կետի պահանջները՝

Որոշվեց՝

«Մարտունու համայնքային տրանսպորտ» և «Վարդենիսի տրանսպորտ» ՓԲ ընկերություններին տրամադրել ժամանակ մինչև 2026 թվականի ապրիլի 2-ը, ժամը 12:00-ն՝ վերոնշյալ թերությունները վերացնելու համար:

Մրցութային հանձնաժողովի

նախագահ՝ Ա. Սիմոնյան

քարտուղար՝ Պ. Գալստյան

անդամներ՝ Ա. Խաչատրյան

Տ. Գասպարյան

Դ. Մելքոնյան